# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 նոյեմբերի 2024 թվականի № 444-Ա**

## ՆՈՐԱՅՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 226-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերությունում 2023-2024 թվականների գործունեության վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքում կազմված տեղեկանքը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետի 2024 թվականի նոյեմբերի 8-ի № Ն/1313-2024 զեկուցագիրը և Նորայր Միքայելյանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 16-ի № 154 գրավոր բացատրությունը՝ **որոշում եմ.**

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու՝ աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն *Նորայր Սերժիկի Միքայելյանի* նկատմամբ կիրառել *«նկատողություն»* կարգապահական տույժը։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2024 թվականի նոյեմբերի 8**
**ք. Հրազդան**